ԱԳՐՈ Լրատու

ՄԱՐՏ 17 - 25 2015 Թ. ԹԻՎ 6 (2061)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Համագործակցության հեռանկար երկու երկրների համար

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Քյուրի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին նաև Կանադայի դեսպանության նախարար-հյուպատոս (Առևտրի և էկոնոմիկայի հարցերով) Նատալի Բեշամը և Խոզի միս արտադրողների կանադական ասոցիացիայի (Canada Pork International) նախագահ Ժակ Պոմերլոն:

Ողջունելով հյուրերին և բարձր գնահատելով նրանց ջանքերը հայ-կանադական գործարար կապերի ամրապնդման գործում՝ նախարարը վստահություն է հայտնել, որ հանդիպումը կնպաստի գյուղատնտեսության ոլորտում երկկողմ համագործակցության ընդլայնմանը: Հակիրճ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում ոլորտի ներկա վիճակը և ընդգծելով աշխարհի առաջատար երկրների փորձի ընդօրինակման ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը՝ նախարարը Կանադայի հետ փորձի փոխանակումը հատկապես օգտակար և իրատեսական է գնահատել: «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի բնակլիմայական պայմանները բարենպաստ են գյուղատնտեսական մթերքների արտադրության համար՝ կարծում եմ, որ ներդրումային տեսանկյունից, մեր երկիրը հետաքրքրություն կառաջացնի կանադացի ներդրողների համար», - նշել է նախարարը:

Գյուղատնտեսության բնագավառում, Կանադայի հետ համագործակցության հեռանկարային ճյուղերի թվում, նախարարը նշել է տավարաբուծության, խոզաբուծության, թռչնաբուծության ոլորտները, ինչպես նաև՝ ջերմոցային տնտեսությունների և պտղատու այգիների ստեղծումը:

2

Հայ-ամերիկյան համագործակցություն

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանում ԱՄՆ նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսին:

Շնորհավորելով հյուրին մեր երկրում դիվանագիտական առաքելությունն ստանձնելու կապակցությամբ՝ նախարարը նշել է, որ նրա պաշտոնավարման ընթացքում հայ-ամերիկյան հարաբերությունները նոր լիցք կստանան: «Տարիների ընթացքում արդյունավետ հարաբերություններ են ձևավորվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ԱՄՆ դեսպանատան և մեր հանրապետությունում գործող ամերիկյան միջազգային կառույցների միջև: Վստահ եմ, որ այդ փոխգործակցությունը շարունակական բնույթ կկրի», – նշել է նախարարը:

Հանդիպման ժամանակ Ս. Կարապետյանը հանգամանորեն ներկայացրել է հանրապետության գյուղատնտեսության ոլորտի ներկա վիճակը, վերջին տարիներին գրանցված արդյունքները, իրականացվող ընթացիկ ու առաջիկա ծրագրերը:

Ոլորտի առաջնային խնդիրների շարքում նախարարն առանձնացրել է կոոպերատիվների ստեղծման, ոռոգման ժամանակակից համակարգերի ու հակակարկտային ցանցերի ներդրման, տոհմային գործի բարելավման, պտղատու նոր այգիների ստեղծման, ինչպես նաև գյուղացիական տնտեսություններին նորագույն գյուղտեխնիկայով ապահովելու անհրաժեշտությունը:

Դեսպան Ռիչարդ Միլսն, իր հերթին, գոհունակություն է հայտնել գյուղատնտեսության ոլորտում ձևավորված հայ-ամերիկյան համագործակցության բարձր մակարդակով և վստահեցրել, որ իր պաշտոնավարման ընթացքում կներդնի առավելագույն ջանքեր՝ այս ուղղությամբ փոխգործակցությունը խորացնելու նպատակով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Հանրապետության նախագահը Արարատի մարզում էր

Հանրապետության նախագահն այցելել է մարզի Արտաշատ համայնքի վարչական տարածքում գտնվող «Գրինհաուզ» ընկերություն, որը հիմնադրվել է 2011 թվականին՝ ջերմոցային համալիր կառուցելու և բանջարաբոստանային կուլտուրաների արտադրություն կազմակերպելու նպատակով: Ընկերության հիմնական գործունեությունը՝ թարմ ու վերամշակված պտուղբանջարեղենի արտահանումն է դեպի ԱՊՀ և եվրոպական երկրներ:

Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուների և «Գրինհաուզ» ընկերության ղեկավարության ուղեկցությամբ, նախագահը շրջայց է կատարել ջերմոցային համալիրում, ծանոթացել իրականացված ավելի քան 15 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներին և դրանց արդյունքում ստեղծված պայմաններին, այդ թվում՝ միջազգային չափանիշներին համապատասխան ենթակառուցվածքներին ու ընկերության զարգացման ծրագրերին:

Գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուները Սերժ Սարգսյանին ներկայացրել են հանրապետությունում ջերմատնային տնտեսության զարգացման միտումներն ու

2

ՀՀ կառավարությունում

Մոտ 3.5 տարի առաջ ՀՀ կառավարության հավանությունն ստացած համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով սկիզբ դրվեց ՀՀ վարչատարածքային բարեփոխման, մասնավորապես՝ համայնքների խոշորացման գործընթացին: ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը քննարկել է համայնքների խոշորացման ծրագրերի երկու տարբերակ՝ ծրագրային և վարչական: Ծրագրային հիմնավորմամբ՝ խոշորացման համար ընտրվել է 14 համայնքային փունջ: Նաև նպատակահարմար է գտնվել իրականացնել համայնքների խոշորացման մի քանի պիլոտային ծրագիր՝ նախապես այդ համայնքում անցկացնելով տեղական հանրաքվե:

2015 թ. իրականացվելու է 3 պիլոտային ծրագիր՝ Լոռու մարզի Թումանյան, Սյունիքի մարզի Շինուհայր, Տավուշի մարզի Դիլիջան համայնքային փնջերով, որտեղ, կառավարության որոշմամբ, ս.թ. մայիսի 17-ին կանցկացվի տեղական հանրաքվե՝ պարզելու համար, թե բնակիչները կհամաձայնվե՞ն արդյոք, որպեսզի շրջակա համայնքները միավորվեն՝ կենտրոն ունենալով նշված բնակավայրերը: Վարչապետ Հովիկ Աբրահամյանի դիտարկմամբ, սա համայնքների խոշորացման առաջին քայլն է: Երեք փունջ համայնքների միավորման վերաբերյալ դժգոհություն կամ վիճելի հարց չկա: Բարեփոխումը շարունակություն է ունենալու:

ՀՀ կառավարությունն իր մի շարք որոշումներում կատարել է փոփոխություններ, որոնց նպատակը՝ սննդամթերքի անվտանգության ոլորտի սանիտարական կանոնների և նորմերի պահպանման վերահսկողությունը մեկ լիազոր մարմնի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության միջոցով իրականացնելն է: Ակնկալվում է, որ որոշումը կնպաստի ոլորտում թույլ տրված իրավախախտումների վերացմանը և կանխարգելմանը միտված օրենսդրության արդյունավետ իրականացմանը: Վարչապետը նշել է, որ ինքն անձամբ հետամուտ է լինելու, որպեսզի որոշումը հստակ իրականացվի:

Գյուղատնտեսական կոոպերատիվների կարիքների բացահայտումը խմբային մեթոդով Էջ 4

Հաջողված ծրագրեր Էջ 5

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Հանրապետության նախագահը Արարատի մարզում էր

1

հեռանկարները, ջերմատների զարգացման համար ստեղծվող բարենպաստ նախադրյալները:

Ըստ ոլորտի պատասխանատուների, 2015թ. փետրվարի դրությամբ, հանրապետությունում շահագործվում են ավելի քան 763.6 հաընդհանուր մակերեսով ջերմատներ, այդ թվում՝ 74.25 հա՝ նորագույն տեխնոլոգիաներով (42.95 հա՝ ՀՀ Կոտայքի, 1.0 հա՝ ՀՀ Արմավիրի և 30.3 հա՝ ՀՀ Արարատի մարզերում):

Հանրապետության ջերմատնային տնտեսություններում աշխատում է 10-12 հազ. մարդ, որոնց մեծ մասը փոքր ջերմատների կառավարողներն են և ժամանակավոր աշխատողները: 2015 թ. կավարտվի նորագույն տեխնոլոգիաներով շուրջ 51.0 հա ջերմատների կառուցումը, որից Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում՝ 46.0 հա, Ձորաղբյուր համայնքում՝ 5.0 հա: Արարատի մարզի Շահումյան համայնքում 2014-2015թթ. կառուցված 30.0 հա ջերմատներից բացի, «Գրինհաուզ» ՍՊԸ-ն նախատեսում է ապագայում տարածքն ընդլայնել ևս 40.0-50.0 հա-ով:

«Գրինհաուզ»-ի պատասխանատուները ներկայացրել են իրենց ղեկավարած ընկերության ընդլայնման ռազմավարությունը՝ նշելով, որ այն ընդգրկում է շուրջ 12 մլն ԱՄՆ դոլար արժեքով լրացուցիչ 20 հա ջերմատնային համալիրի (ամբողջությամբ ջեռուցվող և հիդրոպոնիկայով) կառուցում 2015թ. ընթացքում, որի ֆինանսավորումն իրականացվելու է իտալական «SACE» հիմնադրամի (Արտաքին առևտրի ապահովագրական /վարկավորման ծառայությունների պետական գործակալության) աջակցությամբ, իսկ ջերմատնային համալիրի կառուցվածքները մատակարարելու է իտալական «Լուկկինի» ընկերությունը: Արդյունքում, ընկերության ջերմատներում անմիջապես ներգրավված մշտական աշխատողների թվաքանակը նախատեսվում է կրկնապատկել, իսկ ընդհանուր արտադրական հզորությունները հասցնել տարեկան ավելի քան 15000 տ:

«Գրինհաուզ» ջերմոցային համալիրում Սերժ Սարգսյանը ներկա է գտնվել բողկի վերամշակման ու փաթեթավորման արտադրամասի բացման և ջերմատնային համալիրիի կառուցման 2-րդ փուլի մեկնարկի արարողություններին, որից հետո նախագահի ներկայությամբ «Գրինհաուզ» ՍՊԸ-ն 20 հա նոր ջերմատների շինարարության վերաբերյալ համաձայնագիր է ստորագրել իտալական «Լուկկինի» ընկերության հետ:

www.prezident.am

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Համագործակցության հեռանկար երկու երկրների համար

1

Նախարարը հնարավոր է համարել անասնաբուծության ոլորտում համատեղ ֆերմաների հիմնումը, ինչը ոչ միայն կնպաստի հայկական շուկայում խոզի մսի պահանջարկի բավարարմանը, այլև այդ արտադրանքի դեպի ռուսական շուկա արտահանմանը:

Հանդիպմանը նախարարն առաջարկել է կանադական կողմին առավել հանգամանորեն ուսումնասիրել Հայաստանի ագրարային ոլորտը, և ըստ այդմ, մշակել և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել ոլորտի զարգացմանն ուղղված բիզնես-ծրագրեր:

Միաժամանակ նախարարը պատրաստակամություն է հայտնել աջակցություն ցուցաբերել հայ-կանադական փոխգործակցության խորացման և զարգացման հարցում: Համագործակցությունն իրավական հիմքերի վրա դնելու նպատակով, Սերգո Կարապետյանն առաջարկել է քննարկել երկու երկրների գյուղատնտեսության նախարարությունների միջև համագործակցության մասին հուշագիր ստորագրելու նպատակահարմարության հարցը:

Ի պատասխան նախարարի առաջարկին՝ դեսպան Ջոն Քյուրը հայտնել է, որ կդիմի Կանադայի գյուղատնտեսության նախարարությանը՝ համապատասխան աշխատանքային խումբ Հայաստան գործուղելու և համագործակցության հեռանկարային ուղղությունները ճշգրտելու համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերահսկման համալիր ծրագիր

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ԱՄՆ գյուղդեպարտամենտի պատվիրակությանը, որի կազմում էին Վիրջինիա-Մերիլենդ տարածաշրջանային անասնաբուժական համալսարանի տնօրեն Վալերի Ռագանը և Անասնաբուժական և առողջապահական կենտրոնի տնօրեն Բես Փիերսը:

Վալերի Ռագանը հայտնել է, որ պատվիրակության անդամները, երկշաբաթյա այցի ընթացքում, հանդիպումներ են ունեցել ոլորտի պատասխանատուների հետ, մասնավորապես քննարկվել են կենդանիների բրուցելոզ հիվանդության դեմ պայքարի և դրա կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացմանն առնչվող հարցեր: «Մենք մեծապես կարևորում ենք հանրապետությունում կենդանիների բրուցելոզ հիվանդության դեմ տարվող պայքարի արդյունավետ միջոցների կիրառումը, և այս հարցում հատկապես գնահատելի է ձեր աջակցությունն ու համատեղ աշխատանքը հայ մասնագետների հետ», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Հանդիպման ընթացքում կողմերը մասնավորապես կարևորել են լաբորատորիաների վերազինման և արդիականացման, նորագույն տեխնիկայով համալրված սպանդանոցների ստեղծման, մասնագետների վերապատրաստման հարցերը:

Տիկին Ռագանը նշել է նաև, որ Հայաստանում իրականացված աշխատանքների արդյունքում, հայ մասնագետների հետ համատեղ, նախատեսվում է մշակել կենդանիների բրուցելոզ հիվանդության վերահսկման համալիր ծրագրի նախագիծ, որը կնպաստի այդ հիվանդության ախտորոշման ու կանխարգելման աշխատանքների առավել արդյունավետ իրականացմանը:

Նախարարը ևս մեկ անգամ կարևորել է կենդանիների հիվանդությունների վերացմանն ուղղված արդյունավետ ծրագրերի իրականացումը՝ այդ ենթատեքստում բարձր գնահատելով պատվիրակության և հայ մասնագետների միջև համագործակցությունը:

Նոր ծրագրերի մշակում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահ Վիլհելմ Մոլտերերի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ նախարարը նշել է, որ այս հանդիպումը հիմք կհանդիսանա Եվրոպական ներդրումային բանկի հետ ՀՀ գյուղատնտեսության նախարարության փոխշահավետ համագործակցության համար:

«Եվրոպական ներդրումային բանկն արդյունավետ ծրագրեր է իրականացնում Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերում: Հաշվի առնելով, որ գյուղատնտեսությունն այսօր մեր երկրում հանդիսանում է գերակա ոլորտներից մեկը, կարծում եմ, ժամանակն է ծրագրեր մշակել և իրականացնել նաև գյուղատնտեսության ոլորտում», – նշել է նախարարը:

Համառոտ ներկայացնելով Հայաստանի գյուղատնտեսության ներկա վիճակը՝ նախարարը հանգամանորեն անդրադարձել է ոլորտի այն ճյուղերին, որոնցում առկա են համագործակցության իրատեսական հեռանկարներ: Այս առումով, նախարարը մասնավորապես առանձնացրել է պտղաբուծության, վերամշակման, ջերմոցաշինության ոլորտներում երկկողմ ծրագրերի մշակման, ինչպես նաև՝ սառնարանային տնտեսությունների կազմակերպման, կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման և ջրամբարների կառուցման, մատչելի գներով գյուղատնտեսական վարկերի տրամադրման հնարավորությունը: Պարոն Մոնտերերը նշել է, որ ներկայումս բանկի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև առկա են համագործակցության իրատեսական հնարավորություններ:

Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահի խոսքով՝ ՀՀ Կենտրոնական բանկի հետ կնքված շրջանակային համաձայնագրի շրջանակում, հնարավոր է ֆինանսավորել նաև գյուղատնտեսության զարգացման ծրագրեր՝ աջակցելով մասնավոր հատվածին: Միաժամանակ բանկի փոխնախագահն ընդգծել է, որ նման ծրագրերի իրագործման համար, առաջին հերթին, անհրաժեշտ է մշակել այնպիսի ռազմավարություն, որը կընդգրկի գյուղատնտեսական ամբողջ արժեշղթան: Իր խոսքում նա կարևորել է նաև՝ ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակներում, գիտական համագործակցության ընդլայնումը, վերապատրաստումն ու հայ մասնագետների մասնագիտական կարողությունների ուժեղացումը:

Անդրադառնալով ջրի կառավարման խնդիրներին՝ բանկի փոխնախագահը կարևորել է այդ ոլորտում ժամանակակից ոռոգման խնայողատար տեխնոլոգիաների ներդրման հարցը:

Վիլհելմ Մոլտերերը նաև պատրաստակամություն է հայտնել համագործակցել ՀՀ-ում գործունեություն ծավալող միջազգային տնտեսական և ֆինանսական այլ կազմակերպությունների հետ՝ ներգրավելով վերջիններիս առաջիկայում նախատեսվող ծրագրերում:

Արդյունավետ կառավարում՝ ջրային ոլորտում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Համաշխարհային բանկի պատվիրակությանը, որի կազմում էին ջրային ռեսուրսների ավագ մասնագետ, Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի ղեկավար Ուինսթոն Յունը, ՀԲ ծրագրերի պատասխանատու Արուսյակ Ալավերդյանը, սոցիալական հարցերով ավագ մասնագետ Սառա Մայքլը և այլ պաշտոնատար անձինք:

Հանդիպմանը ներկա էին նաև Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը և Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Ֆելիքս Մելիքյանը: «Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումն այսօր մեր երկրի գյուղատնտեսության ոլորտի առաջնային խնդիրներից է, ուստի այս ուղղությամբ հարկավոր է ավելի ակտիվ միջոցառումներ իրականացնել, հատկապես հաշվի առնելով կլիմայի գլոբալ փոփոխությունների հետևանքով առաջացող սակավաջրության խնդիրները», - ողջունելով հյուրերին՝ նշել է նախարարը:

Հյուրերը նախարարին տեղեկացրել են, որ բանկի աջակցությամբ Հայաստանում իրականացվող ոռոգման համակարգերի բարելավման քառամյա ծրագրի շրջանակում, այցելել են հանրապետության մարզեր, կազմակերպել քննարկումներ ջրօգտագործողների ընկերությունների ներկայացուցիչների, ինչպես նաև հանդիպել համայնքների բնակիչների հետ:

2014 թվականի սկզբին մեկնարկած այդ ծրագրով նախատեսվում է հանրապետության մի շարք տարածաշրջաններում կառուցել ինքնահոս համակարգեր, վերակառուցել ջրանցքներ, ինչպես նաև ներդնել ջրաչափման և կառավարման ժամանակակից համակարգեր:

Հանդիպման ընթացքում նախարարն առաջարկել է՝ Համաշխարհային բանկի հետ համատեղ, մշակել երկարաժամկետ հայեցակարգ, որը կներառի ոլորտի զարգացմանն ուղղված համալիր, այդ թվում՝ ջրամբարների կառուցման, դրանց հզորությունների մեծացման, նոր ջրատարների անցկացման և այլ միջոցառումներ, անխտիր ներառելով ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը նաև շահառուների մոտ: Հյուրերը նախարարին են հանձնել նաև՝ «Հայաստանի գյուղատնտեսական համակարգերի խոցելիության նվազեցումը կլիմայական փոփոխությունների նկատմամբ» և «Հայաստանի Հանրապետության դեպի ջրային ռեսուրսների համալիր կառավարում» լայնածավալ ուսումնասիրությունները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հաջողված փորձը նոր ծրագրի սկիզբ է

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Համաշխարհային բանկի պատվիրակությանը, որի կազմում էին ՀԲ ծրագրերի պատասխանատու, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» (CARMAC) ղեկավար Արուսյակ Ալավերդյանը, ՀԲ գյուղատնտեսության գծով ավագ տնտեսագետ, CARMAC 2 ծրագրի ղեկավար Բեքզոդ Շամսիևը և այլ պաշտոնատար անձինք: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ԳՆ

սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Արմեն Հայրապետյանը և «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի» տնօրեն Գագիկ Խաչատրյանը:

Բարձր գնահատելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի (CARMAC) շրջանակում հանրապետությունում արձանագրված արդյունքները՝ նախարարը համոզմունք է հայտնել, որ ծրագրի երկրորդ փուլը ևս արդյունավետ կլինի: «Ծրագրի երկրորդ փուլի արդյունքում հնարավորություն կստեղծվի ապահովել մասնավորապես՝ կաթի, մսի, պտուղբանջարեղենի արտադրության ոլորտներում իրացվող և արտահանվող արտադրանքի ծավալային աճ», – նշել է նախարարը: Նրա խոսքով՝ CARMAC 2 ծրագրի թիրախային հիմնական նպատակներն են՝ ագրոպարենային արժեշղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը, գյուղատնտեսական կոոպերատիվների հզորացումը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի իրացման և վերամշակման համար կայուն հարթակի ստեղծումը:

Իր հերթին, կարևորելով CARMAC 1 ծրագրի դրական արդյունքները՝ Արուսյակ Ալավերդյանը պատրաստակամություն է հայտնել ընդլայնել բանկի համագործակցությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող կառույցների՝ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և Ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ:

CARMAC 2 ծրագրի ղեկավար Բեքզոդ Շամսիևն ընդգծել է, որ CARMAC 1 ծրագրի իրականացման հաջող փորձը օգտակար և ուսուցողական կլինի միջազգային այլ կառույցների համար:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բիզնես՝ Եվրամիության աջակցությամբ

ՀՀ-ում Եվրամիության պատվիրակությունը և Հայաստանի Երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ) օրերս Ախթալայում նշեցին Կանանց միջազգային տոնը: Միջոցառման նպատակն էր՝ հանրությանը ներկայացնել «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի ձեռքբերումները: Այս համատեղ նախաձեռնությունը ևս մեկ առիթ էր՝ նշանավորելու ԵՄ պատրաստակամությունը՝ օգնելու կանանց կայանալ հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային և այլ ոլորտներում:

Միջոցառումն իրականացվեց ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՀԵԿԱ-ի կողմից Լոռու մարզում իրականացվող «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում: ՀԵԿԱ նախագահ Լիլիթ Ասատրյանն իր ելույթում նշեց, որ Եվրամիության կողմից կյանքի են կոչվում բազմաթիվ ծրագրեր, և այս մեկն էլ դրա վառ ապացույցն է: «Ծրագրի կողմից կազմակերպված դասընթացներին մասնակցել են Լոռու մարզի ավելի քան 140 կանայք և աղջիկներ: Դասընթացների արդյունքում, մասնակիցների կողմից ներկայացվել է 62 բիզնես ծրագիր, որից 12-ը՝ խմբային: Ծրագրերից 14-ը ստացել են դրական գնահատական, որից 3 ծրագիր՝ 1-ը՝ Ախթալայում, և 2-ը՝ Ալավերդիում, արդեն ֆինանսավորվել են: Դրական գնահատական ստացած 11 ծրագրերը գտնվում են վերջնական հաստատման, ընկերությունների գրանցման և փաստաթղթավորման փուլում, որից հետո նրանց նույնպես, դրամաշնորհի տեսքով, կտրամադրվեն ֆինանսական միջոցներ»,-ասաց նա:

Միջոցառմանը ներկա էին նաև Լոռու փոխմարզպետ Արսեն Դարբինյանը և Ախթալայի քաղաքապետ Հայկ Խաչիկյանը, ովքեր մարզի համայնքների ղեկավարների հետ գործուն աջակցություն են ցուցաբերել ծրագրի իրականացման գործում: Ծրագրի նպատակն է՝ խթան հանդիսանալ Լոռու մարզի կանանց տնտեսական կարողությունների զարգացմանը՝ այդպիսով նպաստելով կանանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը: Ծրագրի իրականացման համար ԵՄ-ն հատկացրել է 768.357 եվրո:

Նելլի Սահակյան

ԾՐԱԳԻՐ

Միջոցառումների լիարժեք կատարում

ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գրիշա Բաղիյանը հերթական աշխատանքային այցով մեկնել է Շիրակի մարզ, որտեղ խորհրդակցություն է անցկացրել անասնաբուժության ոլորտի խնդիրների վերաբերյալ:

Խորհրդակցությանը մասնակցում էին Շիրակի մարզպետի տեղակալ Հարություն Արշակյանը, գյուղատնտեության և բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյանը, համայնքապետեր, անասնաբույժներ և տեսուչներ:

Խորհրդակցության ընթացքում տեղի պատասխանատուների հետ քննարկվել են մարզի անասնաբուժական բնագավառի ընդհանուր իրավիճակին առնչվող հարցեր, այդ թվում՝ առկա թերություններն ու բացթողումները, նաև դրանք շտկելու ուղիները:

Գրիշա Բաղիյանի խոսքով՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում, 2015 թվականին, Շիրակի մարզին անասնահակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու նպատակով, հատկացվել են շուրջ 45 մլն դրամի կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցներ: Փոխնախարարը կարևորել է անասնաբույժների պարտականությունների լիարժեք կատարումը՝ հատկապես ժամանակին և պատշաճ մակարդակով կենդանիների կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների իրականացումը:

Մարզ կատարած այցի շրջանակում, փոխնախարարը եղել է նաև մի շարք ֆերմերային տնտեսություններում, որտեղ հետևել է «Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի» շրջանակում ձեռք բերված տոհմային երինջների պահվածքի, խնամքի, տոհմային գործի բարելավման աշխատանքների ընթացքին:

Այնուհետև փոխնախարարն այցելել է Շիրակի մարզի Ազատան համայնքում CARD հիմնադրամի կողմից կառուցված գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոն, ծանոթացել իրականացվող անասնաբուժական ծառայությունների, արհեստական սերմնավորման աշխատանքներին:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Հերթական համատեղ սեմինարը

Վերջերս, Ապարանի տարածաշրջանի Ծաղկաշեն և Եղիպատրուշ համայնքների բնակիչների խնդրանքով, Արագածոտնի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի հետ համատեղ, կազմակերպվեց հերթական սեմինարը:

Սեմինարին մասնակցում էին ԳԱՀԿ-ի տնօրենի տեղակալ Արշալույս Հայրապետյանը, ԳԱՄԿ-ի տնօրեն Խորեն Մկրտչյանը, ԳԱՄԿ-ի մասնագետները և Ապարանի տարածաշրջանի խորհրդատուները: Մասնակցում էին ՀԱԱՀ-ի համաճարակաբանության ու մակաբուծության ամբիոնի վարիչ, անասնաբուժական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հովհաննես Նաղաշյանը և Սննդի անվտանգության ռիսկերի գնահատման ու վերլուծությունների գիտական կենտրոնի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը:

Ծաղկաշեն համայնքում հավաքվել էին մեծ թվով գյուղատնտեսությամբ զբաղվող մարդիկ, ովքեր ունեին բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանները լսելու համար էլ խնդրել էին կազմակերպել այդ հանդիպումը:

Ալֆրեդ Գրիգորյանը ներկայացրեց «Կարտոֆիլի քաղցկեղ» հիվանդության մասին, որն այսօր հրատապ թեմա է: Այդ հիվանդության մասին շատ ավելի տեղեկացված լինելն, անշուշտ, անհրաժեշտություն էր կարտոֆիլագործությամբ զբաղվող ապարանցիների համար: Իսկ անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Նաղաշյանը մանրամասնեց գյուղատնտեսական կենդանիների արյան մակաբուծային հիվանդությունների մասին:

Այնուհետև սեմինարն անցկացվեց Եղիպատրուշ համայնքում, որտեղ նույնպես հավաքվել էին հետաքրքրասեր և գյուղատնտեսության ասպարեզում ավելի շատ գիտելիքներ ձեռք բերելու ընդունակությամբ օժտված գյուղացիներ: Հովհաննես Նաղաշյանը և Ալֆրեդ Գրիգորյանը ներկայացրեցին «Կարտոֆիլի քաղցկեղ», «Գյուղատնտեսական կենդանիների արյան մակաբուծային հիվանդությունները» թեմաներով իրենց ելույթները: Երկու համայնքներում էլ հանդիպումն ունեցավ մեծ լսարան և ապահովեց բարձր արդյունավետություն:

Մասնակիցներին տրամադրվեցին ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-ի կողմից պատրաստված բազմաբնույթ թեմաների վերաբերյալ նյութեր:

Անուշ Մելքոնյան

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԽՄԲԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ

Գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման և արդյունավետ գործունեության համար շատ կարևոր է առաջնահերթ խնդիրների որոշումը, որն իրականացվում է կարիքների բացահայտման միջոցով: Գոյություն ունեն կարիքների բացահայտման բազմաթիվ մեթոդներ: Սակայն դրանցից առավել դյուրին և հեշտ ընկալելի մեթոդներից մեկը՝ կարիք ունեցողների համատեղ քննարկումների հիման վրա, որոշումների կայացումն է: Այս մեթոդի դեպքում՝ որպես միջոց, օգտագործվում են նպատակային խմբերը:

Նպատակային խմբերի միջոցով կարիքների բացահայտումը որակական մեթոդներից ամենատարածվածն է: Այն թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ որոշել առկա խնդիրները՝ դրանց առաջացման ցանկացած շրջանում: Նպատակային խումբը, սովորաբար, կազմվում է 20-25 մասնակիցներից: Այն մեթոդի կիրառման ժամանակ մասնակիցները բաժանվում են մի քանի փոքր խմբերի, որոնք կոչվում են ֆոկուս խմբեր: Ֆոկուս խումբը նպատակ է հետապնդում լուծել առկա թիմին վերաբերող խնդիրը, ստանալ իրենց անձնական փորձի շարժառիթներին հասնելու միջոցները:

Նպատակային խմբերի միջոցով կարիքների բացահայտման առավելություններն են.

1. մասնակիցները խմբային բանավեճի հոգեբանական ազդեցության միջոցով, կարողանում են ազատ արտահայտվել,
2. նպատակային խումբը խթանում է նոր մտքերի և գաղափարների առաջացմանը,
3. նպաստում է մասնակիցների գիտելիքների խորացմանը,
4. անդամները ձեռք են բերում նոր հմտություններ և կարողություններ ուսումնասիրվող ոլորտի կարիքների բացահայտման գործում,
5. բացահայտվում է հիմնական և գլխավոր առաջնահերթությունը:

Նպատակային խմբի աշխատանքը համակարգվում է վարողի միջոցով, որը գործողություններն իրականացնում է հետևյալ հաջորդականությամբ.

• Խմբին առաջարկում է մտածել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և կայուն զարգացման խնդիրների բացահայտման ուղղությամբ՝ չնշելով որևէ կոնկրետ խնդիր և չհուշելով նրանց:

• Հնարավորություն է տալիս բոլորին՝ խոսել և կարծիքներն անմիջապես արտացոլել գրատախտակին:

• Չի գնահատում մասնակիցների առաջարկները, թե արդյոք դրանք «ճիշտ» են կամ «սխալ»:

• Առաջադրված հարցերի շուրջ անցկացվում են քննարկումներ:

• Հնարավորություն է տալիս մասնակիցներին՝ ինքնուրույն որոշել յուրաքանչյուր խնդրի առաջնայնությունը:

• Ոչ ստիպողական, բայց զգուշորեն կանխում է որևէ մասնակցի կողմից իր կարծիքի պարտադրումը:

• Անձամբ չի մասնակցում քննարկումներին՝ արտահայտելով կամ պարտադրելով իր կարծիքը, ներկայացնելով իր առաջարկը կամ լուծումը:

• Հարցումների ժամանակ անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

• հստակ բացատրել մասնակիցներին հարցման անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և կայուն զարգացման գործում,

• հարցնել, թե ինչ խնդիրներ կան գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և զարգացման բնագավառում,

• կարծիքներն առանց մերժելու գրի առնել գրատախտակի վրա,

• տարբեր ձևակերպումներ ստացած նույնատիպ խնդիրները մասնակիցների համաձայնությամբ, բերել ընդհանուր տեսքի, իսկ ավելորդները՝ հանել,

• կարիքների բացահայտման ընթացքում կարող են ընտրվել տարբեր կարծիքներ կամ դրվել տարբեր խնդիրներ:

Օրինակ՝ գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և զարգացման համար՝ որպես այդպիսի խնդիրներ, կարող են լինել.

1. կոոպերատիվների ստեղծման նպատակահարմարությունը,
2. ցածր գներով պարարտանյութերի ձեռք բերումը կոոպերատիվների անդամների համար,
3. տեխնիկական միջոցների ձեռքբերումը,
4. պայքարի միջոցների ձեռքբերումը,
5. խոտի հնձի կազմակերպման միջոցների վարձակալումը,
6. սերմերով ապահովումը,
7. անասնակերի տեսակներով ապահովումը,
8. կարտոֆիլի իրացումը,
9. կաթի իրացումը,
10. տեղեկատվության ապահովումը,
11. գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորումն ու պահպանումը,
12. ֆինանսական միջոցներով ապահովումը:

Խնդիրները նման ձևով ձևակերպելուց հետո ֆոկուսային խմբին առաջարկվում է ընտրել դրանցից առավել 2 կարևորները: Ընդ որում, պայմանականորեն առավել կարևորին տրվում է 2 միավոր, մյուսին՝ 1 միավոր:

Բոլոր խմբերի տվյալներն ամփոփվում են աղյուսակ 1-ում:

Տողերում նշվում են բոլոր խմբերի կողմից առաջադրված առաջնային խնդիրները, իսկ սյուներում խնդրի դիմաց գրանցվում են դրանց ստացած միավորները: Եթե խմբերից մեկը կոնկրետ խնդիրը առաջնային չի համարել, ապա համապատասխան վանդակում գրել 0 /զերո/:

Ստացված ընդհանուր կարիքներից ընտրել բարձր միավորներ ստացած 5 առաջնային կարիքները, այնուհետև խմբերին առաջարկել կարիքները գնահատել 1-5 միավորով: Պայմանականորեն առավել կարևորին տալիս ենք 5 միավոր, իսկ առավել քիչ կարևորներին՝ համապատասխանաբար 4, 3, 2, 1 միավորներ: Այս կերպ գնահատվում են բոլոր խմբերը, այնուհետև աղյուսակ 2-ում խմբավորվում են բոլոր խմբերի կատարած գնահատման արդյունքները, և բացահայտվում է առաջնային դասված կարիքը:

Առաջնային ենք համարում այն կարիքը, որն ստացել է առավելագույն միավոր:

Այսպիսով՝ ըստ մեր օրինակում կատարված կարիքների բացահայտման արդյունքների, առաջնային կարիք է համարվում կոոպերատիվների ստեղծման նպատակահարմարության վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը: Այս առումով, ելնելով կարիքների բացահայտման արդյունքներից, խորհրդատվական գործի կազմակերպիչը ընտրում է խորհրդատվության թեման, որը մեր օրինակում կարող է լինել «Կոոպերատիվների ստեղծման նպատակահարմարությունը» թեմայով: Քանի որ երկրորդային կարիքը՝ ցածր գներով պարարտանյութերի ձեռք բերումն է, ապա ցանկալի կլիներ խորհրդատվության ժամանակ տրամադրել նաև տեղեկատվություն՝ այս խնդրի վերաբերյալ:

Խորհրդատվության թեման մասնակիցների հետ քննարկելուց հետո, կարելի է կայացնել միասնական որոշում և մշակել միջոցառումներ՝ դրա հետագա իրականացման ուղղությամբ:

Աղյուսակ 1. Կարիքների բացահայտման առաջին փուլի արդյունքները

Խնդիրը	Նպատակային խմբեր					Ընդամենը	Առաջնությունը
	I	II	III	IV	V		
ցածր գներով պարարտանյութերի ձեռք բերում	2	0	1	0	0	3	II
անասնակերի տեսակներով ապահովում	1	0	0	0	0	1	IV
կոոպերատիվների ստեղծման նպատակահար մարության վերաբերյալ խորհրդատվություն	0	2	0	2	0	4	I

Աղյուսակ 2. Կարիքների բացահայտման 2-րդ փուլի արդյունքները

Խնդիրը	Նպատակային խմբեր					Ընդամենը	Առաջնությունը
	I	II	III	IV	V		
կոոպերատիվների ստեղծման նպատակահարմարության վերաբերյալ խորհրդատվություն	5	4	4	3	2	19	I
ցածր գներով պարարտանյութերի ձեռքբերում	4	5	3	2	4	18	II
տեղեկատվության ապահովում	3	3	1	1	5	13	IV
գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորում և պահպանում	2	1	2	4	1	10	V

Հ. Ս. Ջավադյան,
Ի.Կ.Փանոսյան
ՀԱԱՀ տնտեսագիտության թեկնածուներ

ԼՈՌԻ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Հայաստանի մանուկներ հիմնադրամը» (COAF) բարեգործական կազմակերպություն է, և համայնքային զարգացման ծրագրեր է իրականացնում հիմնականում փոքրաթիվ բնակչություն ունեցող ՀՀ քաղաքային և գյուղական համայնքներում: Կազմակերպության նպատակն է՝ երեխայակենտրոն ծրագրերի ներդրման միջոցով, բարձրացնել գյուղաբնակների կյանքի որակը, ապահովել առողջ, կրթված, սոցիալապես պատասխանատու և տնտեսապես կենսունակ հանրություն:

2003 թ. մեր երկրում գործունեություն ծավալող հիմնադրամը, արդեն շուրջ 4 ամիս է, ինչ ծրագրեր է իրականացնում Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի 4 համայնքում: Ծրագրի շրջանակներն ընդլայնելու և նորանոր համայնքներ ներգրավելու նպատակով, վերջերս «Հայաստանի մանուկներ հիմնադրամի» գործադիր տնօրեն Անուշ Եդիգարյանը և աշխատակիցները Լոռու մարզպետարանում հանդիպում ունեցան Գուգարքի և Ստեփանավանի տարածարջանների համայնքների ղեկավարների հետ: Հանդիպմանը մասնակցում էին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը և մարզպետարանի աշխատակիցները:

Մարզպետը կարևորել է հիմնադրամի նախաձեռնությունը՝ Լոռու մարզում լայնածավալ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ, վստահեցրել, որ զանազան միջազգային ու տեղական հիմնադրամների հետ համատեղ, աշխատանքի ու համագործակցության ուսանելի փորձ ունեցող Լոռու մարզը լավագույնս կնպաստի իրականացվելիք ծրագրերի բարեհաջող ընթացքին: Նա նաև շնորհակալություն է հայտնել հիմնադրամի տնօրինությանն ու աշխատակազմին՝ ծրագրերն արագ և որակով իրագործելու համար:

Հիմնադրամի գործադիր տնօրենը, իր հերթին, գոհունակություն է հայտնել մարզի ղեկավարին ու կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներին՝ ամենագործուն աջակցության համար և հույս հայտնել, որ ակտիվ համագործակցության շնորհիվ, հնարավոր կլինի նորանոր համայնքներ ներգրավել: Նա համոզմունք է հայտնել, որ հիմնադրամի հետ աշխատելը կոգեշնչի գյուղաբնակներին՝ նորովի գնահատելու սեփական ներուժը, ձգտելու և հասնելու որոշակի արդյունքների:

Հիմնադրամի բարեգործական ծրագրերը ներառում են՝ դպրոցների ու մանկապարտեզների, բուժհիմնարկների, մշակույթի տների հիմնանորոգում և կահավորում, ամառային ճամբարների, սպորտային միջոցառումների կազմակերպում, սոցմանկավարժի և հոգեբանի ինստիտուտի կայացում, վերապատրաստման դասընթացներ, բիզնես ծրագրերի դասընթացներ և այլն: Ըստ Ա. Եդիգարյանի՝ ծրագրերի իրականացման կարևոր նախապայման է՝ հատկապես համայնքի ղեկավարի ակտիվությունն ու համայնքային ներդրումը: Նա տեղեկացրել է, որ հիմնադրամն առաջիկայում նախաձեռնում է Լոռու մարզում կառուցել «Սմարթ»՝ կրթական կենտրոն՝ տարածաշրջանի երիտասարդներին տարբեր մասնագիտություններ ուսուցանելու նպատակով:

Արթուր Նալբանդյանը համայնքների ղեկավարներին հորդորել է լրջությամբ վերաբերվել մեկնարկած ծրագրերին, քանզի սկիզբ առած գործի արդյունքներով է պայմանավորվելու նաև ծրագրերում նոր համայնքներ ներառելու հավանականությունը:

lori.gov.am

Ագրոլրատու
Մարտ 17 - 25, 2015 թ.
թիվ 6 (2061)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽԱՂՈՂԻ ՎԱԶԵՐԻ ԷՏԸ ԵՎ ԲԱԶՄԱԹԵՎ ԱԶԱՏ ՀՈՎՀԱՐԱՆՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում վազերի ձևավորման հիմնական համակարգը, շպալերայի վրա բարձրացված այգիներում, կատարվում է հետևյալ կերպ. այգեթաղ կատարող շրջաններում՝ առանց բնի, իսկ վազերը չթաղող շրջաններում՝ ցածր բնով բազմաթև հովհարն է, թմբային այգիներում՝ թմբային համակարգը:

ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ՕՐԳԱՆՆԵՐԸ

Պետք է տարբերել խաղողի վազի ստորգետնյա մասը, որը կազմում է դրա արմատային համակարգը և վերգետնյա մասը՝ սաղարթը:

Վազն արմատակալով բազմացնելիս, դրա ստորգետնյա մասը կազմում է ստորգետնյա բունը, որից, տարբեր խորություններում, սկիզբ են առնում և տարածվում արմատները: Որքան ուժեղ է զարգացած վազի արմատային համակարգը, այնքան սննդանյութերով ապահովված միջավայրում դրանք ոչ միայն ուժեղ կաճեն, այլև կզարգանան դրանց վերգետնյա օրգանները: Բունը սկսվում է վազի հիմքից և ձգվում մինչև ճյուղավորությունները: Այն կարելի է կազմավորել ցանկացած բարձրությամբ: Բազմամյա ճյուղավորությունները կազմում են թևերը, որոնց քանակությունը և դիրքը, ըստ ձևավորման համակարգի, կարող են տարբեր լինել:

Միամյա մատերը, նայած ձևավորման համակարգին և երկարությանը, ունեն տարբեր անուններ: Երկու-երեք աչքով էտված միամյա մատը, եթե այն ծառայելու է բնի կամ թևերի ցածրացման կամ երիտասարդացման համար, կոչվում է փոխարինող: Չորսից տասը և ավելի աչք երկարությամբ թողնված միամյա մատերը կոչվում են բերքատու մատեր: Միամյա մատերի աչքերից զարգանում են բերքատու շվերը, որոնց հանգույցների վրա դասավորված են տերևները: Տերևածոցում հիմնվում են նոր աչքեր: Տերևածոցի աչքերից նույն տարում զարգանում են նոր շվեր, որոնք կոչվում են բճաշվեր: Գարնանը շվեր են զարգանում նաև բազմամյա մասերի քնած աչքերից, որոնք կոչվում են բնաշվեր կամ հոռաշվեր: Բերքատու մատի վրա մեկ աչքի մեջ տեղավորված են մի քանի, սովորաբար, 3 և ավելի բողբոջներ, որոնցից կենտրոնականը կոչվում է հիմնական բողբոջ, որն էլ մեծամասամբ իր մեջ պարունակում է բերքի սաղմը:

ԷՏԻ ՆՊԱՏԱԿԸ

Էտի միջոցով վազին տրվում է որոշակի ձև, որը դյուրացնում է այգում կատարվող աշխատանքների մեքենայացումն ու այգեթաղը: Այն հնարավորություն է ստեղծում, լույսի և ջերմության օգտագործմամբ, վազի մատերը դասավորել նպատակահարմար ձևով:

Էտի միջոցով սահմանափակվում է վազի վրա եղած աչքերի քանակը, որով, թեև տվյալ տարում, իջեցվում է ստացվելիք բերքի քանակը, սակայն բարձրացվում է որակը: Սահմանափակելով տվյալ տարվա բերքը՝ մենք ոչ միայն պայմաններ ենք ստեղծում բերքը լավ կազմակերպելու համար, այլև նպաստում վազի վրա եղած շվերի բնականոն աճեցողությանը և հաջորդ տարվա լավ բերքի ստացմանը: Էտի միջոցով վազին տրվում է որոշակի ձև, որը համապատասխանում է տվյալ վայրում ընդունված ձևավորման համակարգին:

Էտի միջոցով, յուրաքանչյուր տարի, վազից հեռացվում են ինչպես միամյա մատերի և երկամյա բնափայտի որոշ մասը, այնպես էլ՝ ծերացած, կոտրված և վնասված բազմամյա թևերը:

ՎԱԶԻ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Վազի աճեցողության ուժի և դրա տարբեր մասերի փոխհարաբերությունը կանոնավորելիս, պետք է հաշվի առնել՝

1. վազի սաղարթի մեջ բազմամյա բնափայտի (բնի բարձրությունը, հաստությունը, թևերի քանակը, դրանց երկարությունը և հաստությունը) զարգացման աստիճանը
2. վազի բեռնվածությունն աչքերով, շվերով և բերքով:

Վազի աճեցողության և բերքատվության վրա մեծապես ազդում է դրա վրա թողնված բերքատու մատերի և այդ մատերի վրա եղած աչքերի քանակը, որը կոչվում է բեռնվածություն աչքերով: Վազի բեռնվածությունն աչքերով՝ նախնական է, իսկ շվատումից հետո, շվերով բեռնվածությունը՝ վերջնական, որը քիչ թե շատ մնայուն մեծություն է: Ավելի լայն հասկացությամբ՝ բեռնվածությունը շվատումից հետո, վազի վրա մնացած շվերի և ծաղկափթթությունների, այսինքն՝ բերքի քանակն է: Վազը, չափից ավելի ծանրաբեռնելու դեպքում, շվերը կլինեն համեմատաբար թույլ, կստացվի քիչ և ցածր որակի բերք:

Վազը թերբեռնելու դեպքում, շվերն ուժեղ կաճեն, կհոռանան, տեղի կունենա ծաղկավիժում և պտղավիժում, մատերը լավ չեն փայտանա, հետևապես վազը կթուլանա, և կընկնի դրա բերքատվությունը: Վազերի ինչպես թերբեռնվածությունը, այնպես էլ՝ գերբեռնվածությունը, բացի տվյալ տարվա աճեցողության ուժի և բերքատվության քանակի ու որակի վրա ունեցած բացասական ազդեցությունից, իջեցնում է նաև դրա ցրտադիմացկունությունը:

Վազի տվյալ տարվա բեռնվածության չափը որոշելիս, պետք է հաշվի առնել նախորդ տարում դրա վրա աճած միամյա մատերի վիճակը և փայտացման աստիճանը: Որքան նախորդ տարում վազի աճը բնականոն է ընթացել, և որքան դրա վրա մեծ քանակությամբ տվյալ սորտին համապատասխանող միջակ աճեցողությամբ մատեր են զարգացել, այնքան մեծ հիմք կա բեռնվածությունը մեծացնելու համար: Հողի մշակությունը, պարարտացումը, ոռոգումը նպաստում են վազի աճեցողության ուժի մեծացմանը և պայմաններ են ստեղծում բեռնվածության հետագա բարձրացման համար: Սննդանյութերով աղքատ հողերում և վատ մշակության պայմաններում 20-30 աչքը մեկ վազի համար կարող է մեծ բեռ լինել, իսկ

6

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՀԱՋՈՂՎԱԾ ԾՐԱԳԻՐ

«Դդմաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը ձևավորվել է անցած տարի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ (ԾԻԳ)» ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում:

Կոոպերատիվի անդամների թիվը հասնում է 280-ի՝ շարունակելով համալրվել նոր անդամներով: «Մենք և Դդմաշենի մի խումբ անասնապահներ ու հողագործներ, դիմեցինք ՀՀ գյուղատնտեսության նախարարության «ԾԻԳ» ՊՀ-ին՝ ծրագրին մասնակցելու նպատակով: Այնուհետև ներկայացրեցինք հայտ, որին հաջորդեց «ԾԻԳ»-ի մասնագետների այցը գյուղ: Մշտադիտարկում անցկացնելուց հետո, կայացավ ժողով, որի ժամանակ համախմբված պահանջ ներկայացրեցինք, որպեսզի ծրագիրը մեզ մոտ կյանքի կոչվի: Այն արժանացավ նաև մարզպետարանի հավանությանը, որին հաջորդեց վերջինիս գործուն աջակցությունը: Հետագայում ընտրվեց կոոպերատիվի նախագահ, վարչության անդամներ, վեճեր լուծող հանձնաժողով և այլն: Անհրաժեշտ էր ջրարբիացնել արոտավայրերը, կուտակել անասնագլխաքանակի ձմեռման համար անհրաժեշտ կերի պաշար: Համատեղ որոշեցինք, թե ինչ տեխնիկա է մեզ հարկավոր»,- ասում է կոոպերատիվի նախագահ Ռաֆիկ Փանոսյանը:

Կարճ ժամանակահատվածում, կոոպերատիվի անդամների կողմից 20 % համաֆինանսավորում կատարելուց հետո, Դդմաշենին հատկացվեց 2 հատ ՄՏՅ-82 մակնիշի տրակտոր՝ գյուղգործիքներով, 2 հակավորող սարք, 1 խոտհնձիչ, 1 գութան և այլն: «Մեր հողատարածքները 15-20 տարի չեն մշակվել, հողը կոշտացել է, ուստի ձեռք բերված հզոր տեխնիկան հնարավորություն կտա մշակել քարացած հողը: Նախատեսել ենք տարեցտարի, ավելի քան 50-60 հեկտարով ավելացնել մշակելի հողատարածքները: Կոոպերատիվի ձևավորումից հետո դյուրին են դարձել նաև անասնակերի կուտակման աշխատանքները, քանի որ արդեն մատչելի են ծառայությունների գները: Այսպես՝ մասնավոր ծառայություններ կատարողները 1 հա խոտը հնձում են 45000-50000 դրամով, իսկ կոոպերատիվը՝ այդ աշխատանքի համար պահանջում է ընդամենը 25000 դրամ: Խոտի 1 հակը մասնավորը կատարում է 150, իսկ կոոպերատիվը՝ 120 դրամով: Ձեռք բերած տեխնիկայի շնորհիվ, 35-40 %-ով կրճատվել է ծառայությունների արժեքը: Իսկ ծախսերի կրճատման արդյունքում, գյուղացին ավելացնում է անասնագլխաքանակը»,- նշում է գյուղապետ Ավետիս Ավետիսյանը: Դդմաշենում արդեն առկա են 1811 գլուխ խոշոր, 3000 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: «Գյուղում ազգաբնակչության գերակշռող մասը զբաղվում է անասնապահությամբ: Կոոպերատիվը ձևավորվում է այն դեպքում, երբ միավորվում է անասնապահների 50+1 %-ը: Դդմաշենում արագորեն համախմբվեցին և ստեղծեցին սպառողական կոոպերատիվ, քանի որ կարևորեցին խնդիրները համատեղ լուծելու գաղափարը: Սա, կարելի է ասել, մարզի ամենահաջողված ծրագրերից մեկն է, որի երկրորդ փուլն արդեն մեկնարկել է գարնանը»,- ասում է «ԾԻԳ» ՊՀ-ի մարզային աջակցության թիմի համակարգող Խորեն Բաղալյանը: Ի դեպ, ծախսերի կրճատման արդյունքում, իջնում է նաև արտադրված կաթի և մսի ինքնարժեքը, ինչի շնորհիվ ավելի է դյուրացվում իրացման գործընթացը: Սպառողի համար նույնպես գյուղմթերքի գինը դառնում է մատչելի: Արվում է հնարավորը, որպեսզի ավելանան գյուղացու եկամուտները, իսկ դրա ճանապարհը կենդանիների մթերատվության բարձրացումն է: Այդ նպատակով, արոտավայրերի ջրարբիացման ծրագրի շրջանակներում, կառուցվելու է 5 կմ երկարությանբ ջրագիծ, տեղադրվելու է 3 խմոց: Բացի այդ, կոոպերատիվի կողմից կազմվելու է կենդանիների հերթափոխային արածեցման գրաֆիկ, ինչը հնարավորություն կտա իրականացնել արոտավայրերի արդյունավետ կառավարումը, նաև բնապահպանական խնդիրներ կլուծվեն, քանի որ հնարավորություն կստեղծվի վերականգնել բուսածածկը: «Կուզենայինք, ծրագրի շրջանակում, կառուցվեր սպանդանոց, որը կարող էր սպասարկել նաև հարևան՝ Զովաբեր, Գեղամավան, Ծաղկունք և Գագարին համայնքների ֆերմերային տնտեսություններին: Կաթի և

մսի ընդունման և վերամշակման փոքր արտադրամասերի ստեղծման անհրաժեշտությունը ևս առկա է: Կարևորում ենք նաև անասնաբուժական կլինիկայի ստեղծումը, որի միջոցով կարելի էր կազմակերպել կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքները: Մի խոսքով, մեծ են կոոպերատիվի սպասելիքները ծրագրից: Անձամբ ես ավելացրել եմ խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը՝ այն 6-ից հասցնելով 30-ի»,- խոսքը եզրափակում է կոոպերատիվի անդամ Վրեժ Թադևոսյանը:

Սեփական կերարտադրության ապահովման համար նախատեսել են զբաղվել կերային մշակաբույսերի արտադրությամբ: Իսկ ընթացիկ տարում ծրագրին կներկայացվի նաև 2 կոմբայնի ձեռքբերման հայտ:

Նելլի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽԱՂՈՂԻ ՎԱԶԵՐԻ ԷՏԸ ԵՎ ԲԱԶՄԱԹԵՎ ԱԶԱՏ ՀՈՎՀԱՐԱՆՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

5

ջրովի, սննդանյութերով հարուստ հողերում 60-80 աչքը կարող է ցածր բեռնվածություն համարվել:

Արարատյան հարթավայրում և նրա նախալեռնային գոտում ընդունված չափանիշի խտությամբ տնկված այգիներում՝ Արարատի, Դեղին և Վարդագույն Երևանի, Շահումյանի, Մխալի և այլ ուժեղ աճեցողություն ունեցող սորտերը էտելիս, վազի վրա պետք է թողնել 80-120 աչք: Գառան դմակ, Ոսկեհատ, Ճիլար, Ռքածիթելի, Արենի, Տոկուն և այլ միջակ աճեցողություն ունեցող վազերի վրա՝ 60-100 աչք, իսկ համեմատաբար թույլ աճեցողություն ունեցող սորտերի վազերի վրա՝ 40-60 աչք: Տնկարկի նոսրությանը և խտացմանը համապատասխան, պետք է բարձրացնել կամ պակասեցնել մեկ վազին տրվող բեռնվածությունը: Մեկ հեկտարի վրա թողնված աչքերի քանակը, նայած սորտին և տրված բեռնվածության աստիճանին, պետք է կազմի 150-200 հազար աչք:

Հյուսիս-արևելյան շրջաններում Ռքածիթելի, Լալվարի, Սափերավի և նման աճեցողություն ունեցող սորտերի վազերի վրա պետք է թողնել 60-80 աչք, Կարդինալ, Բոլգար սորտերի վազերի վրա՝ 80-100 աչք, Պինո սև, Ալիգոտե (2,5 x 1,5) և նման սորտերի վազերի վրա՝ 30-40 աչք: Մեկ հեկտարի վրա թողնված աչքերի քանակը, ըստ սորտի, պետք է կազմի 80-160 հազար աչք: Հյուսիս-արևելյան շրջաններում Ռքածիթելի, Լալվարի, Սափերավի և նման աճեցողություն ունեցող սորտերի վազերի վրա պետք է թողնել 60-80 աչք, Կարդինալ, Բոլգար սորտերի վազերի վրա՝ 80-100 աչք, Պինո սև, Ալիգոտե (2,5 x 1,5) և նման սորտերի վազերի վրա՝ 30-40 աչք: Մեկ հեկտարի վրա թողնված աչքերի քանակը, ըստ սորտի, պետք է կազմի 80-160 հազար աչք:

ԷՏԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Էտի երկարությունը վազի ձևավորման, աճեցողության և բերքատվության կանոնավորման ագրոտեխնիկական հիմնական հարցերից մեկն է: Նայած ինչ ձև է տրվում վազին, ըստ այդմ էլ որոշվում է էտի երկարությունը:

Հայաստանի տարբեր շրջաններում, նայած, թե ձևավորման որ համակարգն է կիրառվել, վազի էտը կատարվում է տարբեր երկարությամբ: Համեմատաբար կարճ և խառը էտ է կիրառվում թմբային այգիներում: Այդ դեպքում վազի բնի տարբեր ուղղությամբ դասավորված թևերի կամ ենթաթևերի վրա, նայած վազի հասակին և կարողությանը, կարելի է թողնել 2-3, իսկ առանձին դեպքերում՝ 4 մատ, որոնք, նայած սորտին, այգու հողային պայմաններին, խոնավությանը և կիրառվող ագրոտեխնիկային, պետք է էտել 4-7 աչք երկարությամբ: Կախեթ և դրա նման թույլ աճեցողություն ունեցող սորտերի բերքատու մատերն անհրաժեշտ է էտել մինչև 4-5, Ոսկեհատ սորտինը՝ մինչև 5-6, իսկ Արարատի, Մխալի, Դեղին և Վարդագույն Երևանի ու մյուս սորտերինը՝ մինչև 6-7 աչք երկարությամբ: Խոնավությամբ ապահովված և սննդանյութերով հարուստ հողերում մշակվող վազերի մատերը պետք է էտել ավելի երկար, քան՝ աղքատ հողերում աճող վազերինը:

Բոլոր դեպքերում թևերի և ենթաթևերի ծայրամասում գտնվող կամ ուժեղ մատը պետք է էտել 1-2 աչքով ավելի երկար, քան՝ ներքևի մատը: Հետագայում, որպեսզի շվերը չխտանան, թևերի և ենթաթևերի վրա մատերն էտել այնպես, որ դրանք հավասարաչափ ազատ դիրք ունենան, մեկը-մյուսի վրա ստվեր չգցեն: Շատ երկարած, թուլացած թևերն էտելիս՝ ետ տալ: Նոր թևեր կազմակերպելու և ծերացած թևերը նորերով փոխարինելու համար, վազի բնին մոտ, բազմամյա մատերի վրա աճած մասերից կամ հոռամատերից մի քանիսն էտել 2-3 աչքով՝ որպես փոխարինողներ: Շպալերի վրա բարձրացված այգիներում էտը կատարել համեմատաբար երկար՝ բերքատու մատերն էտելով 6-12 աչք երկարությամբ:

Ուժեղ և միջակ աճեցողություն ունեցող այն սորտերի (Արարատի, Իծապտուկ, Դեղին Երևանի, Մխալի և այլն) բերքատու մատերը, որոնք ունեն երկար միջհանգույցներ՝ էտել 6-10, միջակ աճեցողություն ունեցող սորտերինը (Ոսկեհատ, Ճիլար, և այլն), որոնք չունեն երկար միջհանգույցներ՝ մինչև 12, իսկ թույլ աճեցողություն ունեցող սորտերինը (Հադիսի, Ալիգոտե, Կախեթ)՝ 6-8 աչք երկարությամբ: Բոլոր դեպքերում վազերի թևերի, ենթաթևերի վրա թողնել նաև փոխարինող մատեր՝ էտված 2-3 աչք երկարությամբ: Հայտնի է, որ մատի հիմքից դեպի վեր դասավորված աչքերը միատեսակ արժեք չունեն:

Խաղողի սորտերի մեծ մասի հիմքի 1-3 աչքերն անհամեմատ ավելի պակաս բերքատու են, քան՝ միջին մասում գտնվող աչքերը:

ԷՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Էտված վազերից բարձր բերք ստանալու համար, կարևոր նշանակություն ունի էտի կատարման ժամանակը, որը հիմնականում կախված է տվյալ շրջանի բնակլիմայական պայմաններից: Հանրապետության Հյուսիս-արևելյան, Գորիսի և Մեղրիի տարածաշրջաններում, որտեղ ձմեռը շատ մեղմ է, և ջերմաստիճանը հազվադեպ է -12^0 C-ից իջնում, այգիները կարելի է էտել աշնանը, գարնանը և, նույնիսկ, ձմռանը: Ձմռան ընթացքում էտը պետք է կատարել միայն այն օրերին, երբ ջերմաստիճանը 0^0 C-ից բարձր է:

Արարատյան հարթավայրի և նրա Նախալեռնային գոտու խաղողագործական շրջաններում, ինչպես նաև Եղեգնաձորի շրջանի որոշ վայրերում, այգիները, ձմռան ցրտահարություններից պաշտպանելու նպատակով, թաղում են, հետևաբար էտը հարկավոր է կատարել բացառապես գարնանը և վերջացնել մինչև աչքերի ուռչելը: Գարնանը, որքան շուտ սկսվի այգիների էտը, այնքան աչքերը շուտ կբացվեն և կարող են ենթարկվել ուշ գարնանային ցրտահարությունների: Էտն ուշ սկսելու դեպքում, այն զուգադիպում է աչքերի բացվելուն, և զգալի քանակությամբ բողբոջներ են թափվում:

Հատկապես Արարատյան հարթավայրի և նրա Նախալեռնային գոտու շրջաններում, առաջին հերթին, անհրաժեշտ է էտել հարավային կողմնադրության լանջերի վրա գտնվող այգիները, որտեղ սառը օդը չի կուտակվում և գարնանային ցրտահարության վտանգն ավելի քիչ է, որից հետո հարթությունների վրա տնկված այգիները և վերջում միայն՝ փոս տեղերի կամ ձորերի այգիները, որտեղ, սառը օդի կուտակման հետևանքով, գարնանային ցրտահարությունների վտանգն ավելի մեծ է: Էտի ընթացքում հերթականություն պետք է սահմանել նաև սորտերի նկատմամբ: Առաջին հերթին, պետք է էտել այն սորտերը, որոնց աչքերը շուտ են բացվում:

ԷՏԻ ՏԵԽՆԻԿԱՆ

Էտելիս՝ անհրաժեշտ է հետևել, որ վազի վրա, որքան հնարավոր է, քիչ և փոքր վերքեր առաջանան, և դրանք իրարից հեռու լինեն: Բազմամյա մատերի վրա բոլոր կտրվածքները (թևեր և ենթաթևեր) հեռացնելիս, կտրվածքը կատարել վազի պսակի ներսի կողմից, ելման կետից 2-3 սմ բարձր, որպեսզի մեծ վերքեր չառաջանան: Էտը կատարել այգեգործական մկրատով և սղոցով: Մկրատի միմյանց շփվող մասերը հաճախակի յուղել, իսկ կտրող մասը միշտ սուր պահել: Սուր և կանոնավոր վիճակում պետք է լինի նաև այգեգործական սղոցը: Բերքատու մատերն էտելիս, կտրել վերջին աչքից 1,5 սմ բարձր, թեք՝ դեպի աչքի հակառակ կողմը: Քիչ թե շատ հաստ բազմամյա մասերը հեշտությամբ հեռացնելու համար, հարկավոր է ձախ ձեռքով թույլ սեղմել կտրելու ուղղությամբ: Ավելի հաստ մասերը հեռացնել սղոցով: Էտի ընթացքում պետք է հեռացնել հողի մակերեսին մոտ գտնվող այն մատերն ու հոռամատերը, որոնք վազի հետագա ձևավորման, նոր թևերի կազմակերպման համար պիտանի չեն, ինչպես նաև մակերեսային արմատները:

ՁՈՐ ԿԱՊ

Շպալերային այգիներում էտից հետո, թևերը, ենթաթևերը և բերքատու մատերը կապել առաջին և երկրորդ լարերին: Ձևավորման տարբեր համակարգերի դեպքում՝ վազերի բերքատու մատերը լարին կապել հորիզոնական կամ աղեղնաձև կորացած: Ձոր կապը սկսել էտից անմիջապես հետո և վերջացնել մինչև աչքերի ուռչելը: Միամյա մատերը կապելու լավագույն ժամկետը՝ հյութաշարժության սկզբից մինչև աչքերի ուռչելն է, քանի որ այդ շրջանում դրանք ավելի ճկուն են լինում, առանց ջարդվելու հեշտությամբ կորանում են: Աչքերի ուռչելուց հետո, հատկապես բացվելիս, անզգույշ աշխատելու դեպքում բողբոջները հեշտությամբ թափվում են:

Շպալերային այգիներում վազի թևերը պետք է կապել առաջին լարին, իսկ մատերը՝ առաջին և երկրորդ լարին այնպես, որ դրանք հավասարապես դասավորվեն և լրիվ օգտագործվի վազին հատկացված տարածությունը: Ձոր կապի համար օգտագործում են թել կամ ճիլոպ, որը օգտագործելուց առաջ պետք է թրջել, իսկ աշխատանքի ընթացքում՝ միշտ պահել խոնավ վիճակում: Կապելիս՝ կապն ուժեղ չձգել, քանի որ աճեցողության ընթացքում բազմամյա մատերն ու միամյա մատերը հաստանում են, կապի նեղ օղակի մասից ձևափոխվում և հեշտությամբ կոտրվում են: Կապել ութաձև, փոքր-ինչ ազատ:

ԿԱՆԱՉ ԿԱՊ

Շպալերային այգիներում, աճեցողությանը զուգընթաց, շվերը կապել լարերին: Սովորաբար, վեգետացիայի ընթացքում կանաչ շվերը կապում են 2 անգամ: Առաջին կապը կատարում են ծաղկումից առաջ, երբ շվերն անցնում են երկրորդ-երրորդ լարից և ունենում են 60-70 սմ երկարություն, երկրորդը՝ երբ շվերն անցնում են 3-րդ և 4-րդ լարերից: Շվերը կապել առանձին-առանձին, ուղղահայաց, շպալերի հարթության վրա հավասարաչափ դասավորված: Վազերը բարձրաբուն երկկողմանի կորդոն համակարգով ձևավորելիս, կանաչ շվերն, աճմանը զուգընթաց, մտցվում են երկրորդ և երրորդ հարկի զույգ լարերի միջև, որի շնորհիվ այլևս կանաչ կապ չեն կատարում: Հետագայում շվերն աճում են ազատ կախված վիճակում՝ առանց որևէ միջամտության:

Գագիկ Մելյան,
գյուղ. գիտ. թեկնածու
Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն

ԴԱՍԸՆԹԱՑ

«ԽԱՂՈՂԻՑ ԴԵՊԻ ԳԻՆԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՇՂԹԱՅԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

Վերջերս Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Ֆրանսիայի Սուզ լա Ռուս գինու համալսարանը և ԱՀԿՄԿ հիմնադրամի Երևանի (Ի-Վի-Էս) գինու ակադեմիան իրականացրել են «Խաղողից դեպի գինի տեխնոլոգիական շղթայի նկարագրությունը» վերտառությամբ հնգօրյա վերապատրաստման ծրագիր, որը նրանց երկրորդ համատեղ նախաձեռնությունն էր:

Դասընթացն անցկացրել է գինեգործության փորձագետ, Սուզ լա Ռուս համալսարանի պրոֆեսոր Մարի-Ժոզե Ռիշոն: Մասնակիցների թվում էին՝ գործող գինեգործներ, ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ և Գինու ակադեմիայի ունկնդիրներ: Դասընթացը ներառում էր «Ավանդական և դասական գինեգործություն», «Խաղողը՝ որպես հումք», «Տեխնոլոգիական սարքավորումներ», «Խմորման եղանակներ», «Որակի վերահսկողություն» և հարակից այլ թեմաներ:

Ընդհանուր առմամբ, վերապատրաստման դասընթացը մասնակիցներին հաղորդակից դարձրեց գինեգործական գերտերություն Ֆրանսիայում կիրառվող արդիական որոշ մոտեցումներին և գործելակերպերին: Ֆրանսիայի և Հայաստանի խաղողագործական և գինեգործական տարածաշրջանների, ավանդական և ժամանակակից գործելակերպերի, բնիկ և ներկրված սորտերի համեմատական վերլուծությունը էլ ավելի հետաքիքիր ու համոզիչ դարձրեցին դասընթացը:

Վերապատրաստումը ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀԱԱՀ-ի, ՀՀ արդյունաբերության զարգացման հիմնադրամի և Սուզ լա Ռուս համալսարանի միջև երեք ամիս առաջ կնքված փոխըմբռնման հուշագրով մեկնարկած գործակցության շրջանակում էր:

Դեռևս ամիսներ առաջ ստեղծված Երևանի գինու ակադեմիան արդեն իր խոսքն է ասում գինեգործության և գինու բիզնեսի ոլորտում ժամանակակից մասնագիտական կրթություն տրամադրելու գործում ՀԱԱՀ-ի և վերջինիս ագրոբիզնեսի դեպարտամենտի դերակատարության բարձրացման առումով, մասնավորապես՝ միջազգային որակի փորձագիտական ներուժի և գինեգործ մասնագետների, գինեսերների հայաստանյան դինամիկ լսարանի հետաքրքրությունների շահեկան համադրման միջոցով:

www.anau.am

Ագրոլրատու
Մարտ 17 - 25, 2015 թ.
թիվ 6 (2061)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԵՆՍԱՀԵՂՈՒԿ. ՍՏԱՑՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Գյուղատնտեսության վարման այլընտրանքային տեխնոլոգիաներից է կենսահումուսի օգտագործումը, որն առավել արդյունավետ է և էկոլոգիապես անվտանգ:

Կենսահումուսն անգերազանցելի բնական պարարտանյութ է, որը կալիֆորնիական կարմիր որդերի կենսագործունեության արդյունք է: Կենսահումուսի ջրային լուծույթը (կենսահեղուկ) բաղկացած է մի շարք բաղադրիչներից՝ գումատներ, ֆուլվոթթուներ և ֆիզիոլոգիական ակտիվ նյութեր, ինչպես նաև՝ միկրո- և մակրոտարրեր, հողային միկրոօրգանիզմներ:

Նշված նյութերը բույսերի կողմից յուրացվում են բջջային մակարդակով՝ ուժեղացնելով դրանց իմունային համակարգը: Վերջինիս շնորհիվ, բարձրանում է բույսերի կայունությունն ախտածին գործոնների, ինչպես նաև՝ բիոտիկ և աբիոտիկ սթրեսների (երաշտ, բարձր և ցածր ջերմաստիճաններ և այլն) ազդեցության նկատմամբ:

ԿԵՆՍԱՀՈՒՄՈՒՍԻ ՋՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Կենսահումուսի ջրային լուծույթը բաց դարչնագույն հեղուկ է, որն օժտված է մանրեասպան և սնկասպան հատկություններով: Կենսահեղուկը պատրաստելու համար, անհրաժեշտ է 2 կիլոգրամ կենսահումուսը լուծել եռացրած, մինչև սենյակային ջերմաստիճան հասցրած 10 լ ջրում և թողնել 12 ժամ: Լուծույթի նստվածքի վրայի հեղուկը հենց կենսահումուսի լուծույթն է՝ 0.03 % խտությամբ: Այն պետք է զգուշորեն առանձնացնել նստվածքից, քամել և լցնել 22երի մեջ: Կենսահեղուկը պահանջվող խտություններով օգտագործելու ընթացքում նոսրացնում են ջրով:

ՍԵՐՄԵՐԻ ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄ

Սերմերի նախացանքային մշակումը ճնշում է հիվանդությունների հարուցիչներին, բարձրացնում է սերմերի ծլունակությունը և ծլարձակման էներգիան, խթանում արմատագոյացումը: Բանջարային մշակաբույսերի սերմերի մշակումը կատարվում է 1:5 հարաբերությամբ լուծույթում (100 մլ կենսահեղուկը՝ 0.5 լ ջրում): Սերմերի մշակումը կատարվում է թանզիֆե պարկիկներում՝ 8 ժամ տևողությամբ: Կարտոֆիլի պալարները մշակում են 1:25 հարաբերությամբ լուծույթով (400 մլ կենսահեղուկ՝ 10լ ջրում): Կարտոֆիլի մեծ քանակության դեպքում, անհրաժեշտ է պալարները փռել մեկ շերտով, լույսից պաշտպանված տեղում և ցողել լուծույթով՝ մինչև թրջվելը, այնուհետև ծածկել՝ 10-12 ժամ տևողությամբ:

Խաղողի կտրոնները և պտղատու տնկիների արմատները թրջում են 1:25 հարաբերությամբ լուծույթով՝ 24 ժամ տևողությամբ:

ԱՐՏԱՐՄԱՏԱՅԻՆ ՄՆՈՒՑՈՒՄ

Հանդիսանում է հիվանդություններից պաշտպանության և բերքատվության բարձրացման առավել արդյունավետ միջոց: Մշակումը պետք է կատարել 1:10 հարաբերությամբ լուծույթով (100 մլ կենսահեղուկը՝ 1լ ջրում)՝ վեգետացիայի ընթացքում՝ 2-3 անգամ: Ցողումը կատարել առավոտյան ժամերին՝ մանր դիսպերսիոն սրսկիչով, մառախուղի տեսքով:

Բանջարանոցային բույսերի առաջին արտարմատային սնուցումը կատարվում է 5-6 տերևի փուլում, սածիլով մշակելու դեպքում՝ սածիլացման 3-4-րդ օրը: Հետագա սրսկումներն անցկացնել 10-14 օր հետո՝ լոլիկի, վարունգի, սմբուկի ծաղկման փուլում, ճակնդեղի, բողկի, գազարի արմատապտուղ կազմելու ընթացքում, կարտոֆիլը՝ ծլելուց հետո:

Կենսահումուսի ջրային լուծույթը համատեղելի է թունաքիմիկատների հետ և թույլ է տալիս սնուցումը զուգակցել հիվանդությունների դեմ տարվող պայքարի հետ:

Թունաքիմիկատների հետ կենսահեղուկի զուգակցված օգտագործման տեխնոլոգիան իջեցնում է թունաքիմիկատների նեգատիվ ազդեցությունը, բարձրացնում է բույսերի դիմացկունությունը, ինչպես նաև քիմիական պաշտպանության միջոցների չափաքանակների իջեցման շնորհիվ, հնարավորություն է տալիս նվազեցնել թունաքիմիկատային ծանրաբեռնվածությունն ագրոհամակեցությունների վրա: Օրինակ՝ կարտոֆիլի լուսակոփված տնկանյութը թունաքիմիկատի և կենսահեղուկի զուգակցված լուծույթով մշակելու դեպքում, թունաքիմիկատի չափաքանակի մինչև 25 % կրճատելու շնորհիվ, իջնում է դրա ֆիտոթունավոր ազդեցությունը մշակաբույսի վրա՝ և ապահովելով բարձր բերքի ստացում: Հացազգի բույսերի դեպքում, ախտահանիչների չափաքանակի նվազեցումը (25-50 %), և համակցումը կենսահեղուկի հետ, զգալիորեն բարելավում է բույսերի աճը, զարգացումն ու արդյունավետությունը, միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս կրճատել օգտագործվող թունաքիմիկատների չափաքանակները, ինչը կարող է նկատելի բարելավել շրջակա միջավայրի իրավիճակը:

Նույն մեթոդը կարելի է կիրառել հերբիցիդների օգտագործման դեպքում:

Ռ. Օսիպովա,
Ա. Ոսկանյան,
կենսաբանական գիտությունների թեկնածուներ

Կալիֆորնիական կարմիր որդեր

Կենսահումուս

Կենսահեղուկ. կենսահումուսի ջրային լուծույթը

ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ Է ԿՐԵԼ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Ռուսաստանի Դաշնության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Լ.Դ. Լանդաուի անվան տեսական ֆիզիկայի ինստիտուտում, հետազոտելով տաք ամպերում գոլորշու մասնիկների կառուցվածքն ու դրանց հետ կատարվող փոփոխությունները, կարողացել են կառուցել դրանց մաթեմատիկական մոդելը, որը կարող է կիրառվել Երկրի չորային գոտիներում՝ տեղումների կառավարման տեխնոլոգիաներ մշակելու համար:

Չնայած մշակված մոդելն այնքան համընդհանուր է, որ նրա միջոցով կարելի է անգամ հաշվարկել փոշու և գազի մասնիկներից նոր մոլորակների առաջացումը կամ՝ ներքին այրման շարժիչներում վառելանյութի կաթիլների դինամիկան, որն, առաջին հերթին, կօգտագործվի եղանակի ճշգրիտ կանխատեսման և տեղումների կառավարման համար:

Սովետական գիտնականները սառը ամպերի վրա ազդման միջոցների մասին գիտեին դեռևս անցյալ դարի կեսերից: Այն ժամանակ մշակվել էր տեխնոլոգիա, որը կանխում էր կարկուտի առաջացումը: Գյուտը մեծ օգուտ բերեց գյուղատնտեսությանը, իսկ այն փոխ առած ամերիկացիները կարողացան լուծել իրենց համար շատ կարևոր խնդիրներ՝ էապես նվազեցնելով երկրի մայրցամաքը սարսափի ենթարկող փոթորիկների հզորությունը: Դա արվում է քիմիական միացությունների՝ արծաթի կամ կապարի յոդիդի, հեղուկ ազոտի կամ գրանուլացված ածխաթթու գազի միջոցով, որոնք տարածվում են ինքնաթիռներից (ԽՍՀՄ երկրներում դա արվում էր թնդանոթներից: Գերսառեցված կամ լրացուցիչ ակտիվ կենտրոններ ստացած ամպերը բյուրեղանում են և գետնին մոտենալով՝ դառնում են անձրև:

Ճիշտ է, խնդիրն ունի լուծում միայն սառը ամպերի համար, իսկ տաք ամպերում մասնիկների խոշորացումը մինչև կաթիլների, տեղի է ունենում բոլորովին այլ բնույթի ֆիզիկական գործընթացում: Եթե սառը ամպերով պայմանավորված՝ փոթորիկներից և կարկուտներից ոչ միայն կարելի է փրկել բերքը, այլ նաև ապահովել օդանավակայանների անխափան աշխատանքը, ապա տաք ամպերից ձևավորվող մառախուղից, որը շարունակում է խափանել ոչ միայն օդային, այլև ծովային և ցամաքային տրանսպորտի աշխատանքը, առայժմ փրկություն չկա: Այնուամենայնիվ, մառախուղները գյուղատնտեսությանը մինչև հիմա վնաս չեն կարողացել հասցնել, իսկ սառը ամպերի կառավարումով, ոռոգման խնդիրն առայժմ, առնվազն, տեսականորեն լուծվում է: Այն հարցին, թե մշակված մոդելը կարող է դառնալ տեխնոլոգիա, թե ոչ, Լանդաուի ինստիտուտի այդ խնդրով զբաղվող գիտնականները միանշանակ պատասխանում են, որ գիտության պատմության մեջ դեռ չի եղել դեպք, երբ մարդու համար արժեք ներկայացնող գյուտը տեխնոլոգիա չդառնա: Իսկ դառնալուց հետո այն կլուծի միանգամից մարդկության համար 2 կարևորագույն խնդիր. անձրևները չեն գա այնտեղ, որտեղ պետք չեն, և կտեղան այնտեղ, որտեղ դրանց կարիքը շատ է զգացվում:

ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՈՐ ՁԵՎ

Կելլի Նելսոնը (Միսսուրիի համալսարանից) կիրառել է հողի նվազագույն մշակման նոր մեթոդ և բավականին գոհացուցիչ արդյունք է ստացել (առայժմ ցորենի և եգիպտացորենի համար) և այժմ զբաղված է այդ արդյունքի տարածմամբ:

Այն իրենից ներկայացնում է հողի նվազագույն մշակման մի նոր, յուրահատուկ ձև. դաշտը բաժանվում է մեկուսեջ վարվող 30 սմ լայնությամբ շերտերի, 20 սմ խորությամբ վարվում է, այնուհետև անհրաժեշտ խորությամբ կատարվում է ցանք, որից հետո հատուկ վերափոխված տեխնիկայի միջոցով սերմերի տակ հայտնվում են անհրաժեշտ քանակությամբ ազոտական և այլ պարարտանյութեր:

Եղանակի առավելությունն այն է, որ քիչ էներգիա է ծախսվում, նվազում է հողի էրոզիան, ավելի լավ է պահպանվում խոնավությունը, իսկ ավելի խորը թաղված ազոտը, բույսերը բավարար կերպով պարարտացնելու հետ միասին, գրեթե չի վերածվում ազոտի ենթօքսիդի, որը 300 անգամ ավելի է նպաստում կլիմայի գլոբալ տաքացմանը, քան՝ ածխաթթու գազը (մթնոլորտում գտնվող N_2O-ի մոտ 58 %-ը պայմանավորված է ազոտական պարարտանյութերի կիրառմամբ): Իհարկե, զուգահեռ աճում է նաև մշակաբույսերի բերքատվությունը՝ 15-25%-ով:

Վ Հ

ՎԱՐԴԵՐԻ ՇՎԱՏՆԿՈՒՄ ԲՈՒՐԻՏՈ ԵՂԱՆԱԿՈՎ

Վարդերի հայրենիքը համարվում է Պարսկաստանը: Այն կոչվել է նաև Գյուլիստան «Վարդերի պարտեզ»: Բառի ծագումը եկել է պարսկերեն գյուլ բառից, և թարգմանաբար նշանակում է վարդ:

Վարդերը միշտ էլ եղել են կանանց ուշադրության կենտրոնում. նրանց մասին հյուսվել են բազմաթիվ լեգենդներ: Հին ժամանակներում հիշատակվել են 10 անուն վարդերի տեսակներ: Հույն պատմիչ Հերոդոտոսը 5-րդ դարում նկարագրել է Մակեդոնիայի այգիները, որոնցում վարդերն ուրույն տեղ ունեն: Դրանցից հատկապես աչքի են ընկնում բազմաթերթ վարդերը (махровая роза): Նեոպլատոնական թանգարանում պահպանվել են նույնիսկ դամասկյան վարդերի պատկերներ, որոնց հայրենիքը, անտարակույս, համարվում է արևելքը: Վերածննդի ժամանակաշրջանը նույնպես զերծ չի մնացել. կտավներում հաճախ են պատահում վարդերի գեղեցիկ պատկերներ: Իսկ ինչպես են ամեն անգամ աճեցվում ու թարմացվում վարդերը, և ինչ խորհուրդներ են տալիս մասնագետները:

Բնականաբար, ձմեռվանից հետո վարդերը երբեմն վնասվում են: Ներկայումս շատ հայտնի է վարդերի մշակման **Բուրիտո** եղանակը, որն էլ խորհուրդ են տալիս մասնագետները:

Գարնան սկզբին կտրում են տնկաշիվերը: Հատված տնկաշիվերը չպետք է լինեն մատիտից բարակ, նույնիսկ ցանկալի է, եթե լինեն ավելի հաստ: Երկարությունը պետք է լինի 15-20 սմ: Հենց այդպիսի տեսք ունեցող տնկաշիվերն են իրենց մեջ պարունակում բավարար շաքար՝ արմատի հետագա զարգացման համար: Վերցնում են թերթի էջ, պոլիէթիլենային

տոպրակ և ջուր: Տնկաշիվերը դարձնում են փունջ, փաթեթավորում թերթի մեջ այնպես, որ փակ լինեն բոլոր կողմերից: Այնուհետև ջուր են շաղ տալիս՝ թերթը խոնավացնելու համար և դնում տոպրակի մեջ: Փաթեթը դնում են մութ ու զով վայրում, +18 ջերմաստիճանի տակ: Առհասարակ կալլուսը (կոշտացումը), որը արմատների ձևավորման հիմքն է, տեղի է ունենում 3-4 շաբաթվա ընթացքում: Շաբաթական 1-2 անգամ ստուգում են, որ վնասված տնկաշիվեր չլինեն, քանի որ դրանք կարող են ոչ միայն իրենք վնասվել, այլև վնասել մյուսներին:

Դրանից հետո արդեն կարելի է տնկել բաց հողում ու թողնել, որ աճի մինչև ամառ: Բուրիտո եղանակը շատ հարմար է վարդերի բոլոր տեսակների համար:

Վարդերի աճեցման Բուրիտո եղանակը լայն տարածում ունի Ամերիկայի Միացյալ Նահանգներում, առաջին անգամ այն օգտագործվել է Եվրոպայում՝ ավստրիալացի մասնագետների կողմից: Հայաստանում այն նույնպես կիրառվում է, բայց՝ ոչ հաճախ:

Լիլիթ Գասպարյան

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

Հազրեվարդ

Հազրեվարդը (Մարիամի ծաղիկ կամ խնկունի) շրթնածաղկավորների ընտանիքին պատկանող մշտադալար, մինչև 1 մ բարձրությամբ թփանման բույս է: Տերևները նստադիր, հակադիր են, տերևաթիթեղը երկարավուն-գծային է, ամբողջաեզր, կաշվեպատ, վերևի կողմում՝ վառ կանաչ, իսկ ցածրից պատված է սպիտակավուն խավով:

Ծաղկաբույլը մինչև 10 ծաղիկ պարունակող գագաթային ողկույզ է, ծաղկման շրջանը երկարատև է, իսկ պտուղն ընկուզիկ է: Ըստ ավանդազրույցի՝ Մարիամ Աստվածածինը դնում է բարուրած որդուն սպիտակ ծաղկած խիտ թփի ստվերում և գնում դեպի գետը, մինչև նրա վերադառնալը ծաղիկների գույնը փոխվում է կապույտի: Ոչ մի բույս այդչափ հայտնի և կիրառելի չի եղել անտիկ դարաշրջանում և միջնադարում, որքան հազրեվարդը: Քրիստոնեական մշակույթում հազրեվարդը հավերժության, ճշմարտության, իմաստության, հավատարիմ սիրո խորհրդանիշ է:

Բժիշկները կարծում են, որ հազրեվարդը վերականգնում է նույնիսկ ծանր վիրահատության ենթարկված հիվանդի ուժերը: Մասնագետները նյարդային խանգարման, ուժասպառության դեպքում, խորհուրդ են տալիս թրմել բույսն ու խմել: Հազրեվարդի չոր տերևներից պատրաստում են թեյ. 1 ճ/գ հումքը լցնել 300 մլ ջրի մեջ, եփել մինչև եռալը, ապա թրմել: Խմել 50-ական մլ՝ օրը 5-6 անգամ, վերջինը՝ քնելուց 2-3 ժամ առաջ: Թեյը կարգավորում է արյան շրջանառությունը, նպաստում ֆիզիկական և մտավոր աշխատունակության բարձրացմանը: Խորհուրդ է տրվում խմել այտուցվածության, փքվածության, մարսողության խանգարման դեպքում:

Հազրեվարդն ունի նաև արտահայտված հակաբորբոքային և հականեխիչ հատկություն: Բույսը շատ հարգի է Ֆրանսիայում, Իտալիայում և Անգլիայում, մշակվում է Ղրիմում, Վրաստանում՝ որպես համեմունք և արժեքավոր եթերային յուղ ստանալու նպատակով:

Ըստ մասնագետների՝ հազրեվարդի եթերային յուղը կիրառվում է մոտ 40 հիվանդությունների բուժման համար, սակայն, կախված կլիմայական պայմաններից, բաղադրությունը և ազդեցության չափը կարող են փոփոխվել:

Ինչ գիտենք գետնախնձորի մասին

Գետնախնձորը հայտնվում է մեր հողամասերում, ու դրա մասին մենք հիշում ենք միայն վաղ գարնանը, երբ մեր օրգանիզմի վիտամինային պաշարները սպառվում են:

Գետնախնձորը, սննդային մեծ արժեք ունենալուց բացի, նաև բուսական նշանակություն ունի: 17-րդ դարում, երբ ռուսական ցար Ալեքսեյը հրամայել էր հարցաքննել բոլոր հեքիմներին ու գրի առնել նրանց կիրառած բժշկության միջոցներն ու դեղատոմսերը, շատերն էին նշել գետնախնձորի մասին: Այն թրմվում էր գինու մեջ և օգտագործվում սրտային հիվանդությունների ժամանակ: Սակայն, այսքանով գետնախնձորի օգտակարության ցանկը չի վերջանում: Արմատապտուղների հյութով կամ եփուկով հնում բուժել են վերքերն ու այրվածքները, ողնաշարի ցավերը: Այն օգտագործվել է արյան անոթների խցանումների վերացման, անքնության, ուժասպառության ժամանակ: Ներկայումս ավելացել են տարբեր հիվանդությունների դեմ կիրառումները: Գետնախնձորի մեջ ինսուլինի բարձր պարունակության, առկա հանքային նյութերի և վիտամինների շնորհիվ այն օգտագործվում է արյան բարձր ճնշման, սրտի իշեմիկ հիվանդության, սակավարյունության, ստամոքսի խոցերի և, վերջապես, շաքարային դիաբետի բուժման համար:

Գետնախնձորի պարբերաբար օգտագործումը և դրա թարմ հյութը նպաստում են արյան մեջ շաքարի քանակի նվազմանը, օգնում աղերի կուտակումների դեպքում, բարձրացնում է դիմադրողականությունը, նիհարելու լավ միջոց է և պահպանում է օրգանիզմի բնական էներգետիկ բալանսը: Մեծ բժշկահայր Հիպոկրատեսն ասել է, որ սնունդը պիտի դեղ լինի մարդու համար, իսկ դեղը՝ սնունդ: Սա իսկապես գետնախնձորի համար է ասված: Գետնախնձորից կարելի է աղցաններ, բանջարեղենային ապուրներ, խյուս, խավարտներ պատրաստել, տապակել կարտոֆիլի նման, բլիթներ պատրաստել: ԱՄՆ-ում, գետնախնձորից, նույնիսկ, դիետիկ սուրճ են արտադրում:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

2015 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ագրոլրատու»
թերթի

1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ամսագրի

1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատփաշե» կազմակերպությունները

Ագրոլրատու
AGRONEWS

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 21
ստորագրված է տպագրության 24.03.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա